

одной стороне способа производства. Тов. Зурабян выразил свое несогласие с рядом советских экономистов (академик Струмилин и другие), которые фактически отрицают необходимость и неизбежность разделения труда и специализации между работниками при коммунизме. Далее тов. Зурабян остановился на некоторых вопросах создания материально-технической базы коммунизма, как решающей закономерности перехода от социализма к коммунизму.

Относительно товарно-денежного хозяйства при коммунизме проф. Зурабян сказал: внешние причины (наличие капиталистических и социалистических стран) не могут вызвать необходимости товарного хозяйства, если внутренне такой необходимости не будет, и прежде всего в рыавет содержание от формы явления; здесь, кроме того, стоимость при коммунизме без плановой стоимости (Струмилин) механически отрывает содержание от формы явления; здесь, кроме того, стоимость смеживается с категорией общественно необходимых трудовых затрат вообще. Коммунизм и товарное хозяйство несовместимы.

Закрывая конференцию, проф. Зурабян отметил, что, несмотря на отдельные недочеты, конференция принесла положительные результаты, она несомненно поможет экономистам правильно ориентироваться по этим вопросам как в своей научной, так и в педагогической и пропагандистской работе.

Н. М. МАНАСЕРЯН

ԶԵԽ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՏ

Սովետական Հայաստանի տնտեսական խումբը, 1959 թ. փետրվարի 7-ից մինչև 20-ը 14 օրվա ճանապարհորդության ժամանակ, շատ հաճելի հանդիպումներ ունեցավ Զեխոսովական ժողովրդա-դեմոկրատական ուսուցիչների աշխատավորների հետ:

Պրագայի աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկն է: Ստեղծագործ չեխ ժողովուրդը այստեղ է կենտրոնացրել դարերի ընթացքում կուտակված իր կուլտուրական արժեքները: Դրա փայլուն ապացույցն են Պրագայի Կրեմլի հոյակապ կառուցումները:

Սակայն ամենակարևորը չեխոսովականների մոտ՝ այդ նոր, սոցիալիստական կյանքի կառուցման թափն է: Այս ժողովուրդը իր իսկական երիտասարդության շրջանն է ապրում: Ամենուր նկատվում է խանդավառություն և ընդհանուր վերելք: Այդ նկատվում է զյուղում և քաղաքում, արդյունաբերական ձեռնարկություններում և աշխատավորների ընդհանուր հավաքներում:

Չեխ ժողովրդի ազգային հարստությունն է հանդիսանում ստրագգվյան հարուստ դրադարանը, որտեղ մեծ խնամքով պահվում են գիտության բոլոր բնագավառներն ընդգրկող շատ հազվագյուտ գրքեր և ձեռագրեր: Իր գեղեցկությամբ հատկապես աչքի է ընկնում փիլիսոփայության դահլիճը, որի առաստաղը զարդարված է XVIII դարի հազվագյուտ յուղանկարներով:

Պրագայի գիտական և կուլտուրական խոշոր կենտրոնն է Կարլովի համալսարանը, որը աշխարհի հնագույն համալսարաններից մեկն է:

Մեծ հետաքրքրում էր արևելագիտության և հատկապես հայագիտության և կովկասագիտության ուսումնասիրման վիճակը Կարլովի համալսարանում:

Պրագայի համալսարանը իր տասը ֆակուլտետներով ընդգրկում է գիտության բոլոր բնագավառները: Մոտ երեք ժամ տևող մտքերի փոխանակությունը համալսարանի մի խումբ պրոֆեսորների, դոցենտների և ուսանողների հետ մեր ժողովուրդների փոխադարձ սիրո լավագույն օրինակ էր: Համալսարանի մուտքի մոտ մեզ դիմավորեց ֆիլոլոգիական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող, բարձրահասակ մի հաճելի չեխ երիտասարդ, որը հայերեն լեզվով մեզ ողջունեց և բարի գալուստ մաղթելով ներս հրավիրեց: Դա Պալեկ Բոգոմիրն էր, որը կովկասագետ պրոֆ. Յարոմիր Էդլիշկայի ղեկավարությամբ պատրաստվում է դառնալ հայոց լեզվի մասնագետ: Նա բավական վստփ և գրական հայերենով էր խոսում մեզ հետ: Պալեկ Բոգոմիրը պատմեց, որ աշխատում է տիրապետել գրաբար լեզվին և դիպլոմային աշխատանք է գրում «Գրաբարի չոդը նոր կտակարանի մեջ» թեմայով: Պրոֆ. Յա. Էդլիշկան աշխատում է «Հայկական բարդ բառերը» գիտական աշխատության վրա: Նա հայագիտության և վրացագիտության ճանաչված մասնագետ է և Պրագայի համալսարանում հաջողությամբ գլխավորում է գիտության այդ ճյուղերի զարգացման գործը: Հայագիտական կարիներում չեխ ուսանողները ջանասիրությամբ ուսումնասիրում են բազմավաստակ Հ. Աճառյանի, լեզվաբաններ՝ Ա. Ղարիբյանի, Ա. Աբրահամյանի և ուրիշների աշխատությունները:

Մենք երախտագիտությամբ էինք լցված դեպի մեր չեխ բարեկամները, որոնք այնքան լուրջ ուշադրություն են դարձնում հայոց լեզվի ուսումնասիրման գործին:

Հաճելի զրույց ունեցանք նաև XIX դարի ռուս գրականության պատմության դասախոս Պարուկ Ռադեգաստի, լեզվաբան, լեզուների տիպերը ուսումնասիրող պրոֆ. Վլադիմիր Սկալիչկայի, Հին Արևելքի մասնագետ Վլադիմիր Սոուշեկի և ուրիշների հետ:

Արևելյան լեզուների ամբիոնի վարիչ պրոֆ. Լյուբար Մատուշը մեզ ցույց տվեց այն կաբինետները, ուր ուսումնասիրվում են Մերձավոր և Հեռավոր Արևելքի երկրների ժողովուրդների հին և նոր լեզուները: Այդ կաբինետներում էր կենտրոնացված Արևելքի համարյա բոլոր լեզուներով լույս տեսած մասնագիտական գրականությունը, որը ջանասեր կերպով ուսումնասիրում էին չեխ գիտնականներն ու ուսանողները:

Զեխոսովակյան ռեսպուբլիկայի կառավարությունը բոլոր անհրաժեշտ պայմաններ է ստեղծել երիտասարդության համար ուսումնասիրելու Արևելքի և Արևմուտքի բազմաթիվ ժողովուրդների լեզուներն ու նրանց ստեղծած կուլտուրական ժառանգությունը:

Մենք այցելեցինք նաև համալսարանի հնագիտության թանգարանը, որտեղ մեծ խնամքով պահվում են ականավոր գիտնական՝ ակադեմիկոս Երոզնու 1920—1930 թվականներին Փոքր Ասիայում և հատկապես Սիրիայում կատարած հնագիտական պեղումների արդյունքները: Այդտեղ պահվող նյութերից հատկապես մեծ արժեք են ներկայացնում աղյուսե տախտակների վրա գրված սեպագիր արձանագրությունները:

Զրույցի վերջում մենք համալսարանի պրահարանին նվիրեցին հայագիտական աշխատություններ: Համալսարանի հայագետները մեզ նվիրեցին չեխերեն լեզվով թարգմանված Եղիշե Չարենցի «Լենինն ու Ալին» պոեմը, որը մեզ համար շատ թանկարժեք նվեր էր:

Կարլովի համալսարանը, ունենալով բազմադարյան պատմություն, այժմ իր ծաղկման ու բարգավաճման նոր վերելքի շրջանն է ապրում:

Մենք հրաժեշտ տվեցինք համալսարանի կոլեկտիվին որպես ջերմ բարեկամների:

Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

